

**ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐԻՇՏԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՑՈՐԵՆԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ  
ՄԻՋՈՑ**

**ՈՍԿԱՆՅԱՆ ԱՇՈՏ**

*Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ամբիոնի վարիչ  
Էլփոստ՝ ashot.voskan@gmail.com*

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ**

*Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
Հայաստանի ազգային ագրարային համալսարանի դասախոս  
Էլփոստ՝ armanhar@list.ru*

**Հոդվածում խնդիր է դրվել գնահատելու ցորենի արտադրության արդյունավետության փաստացի վիճակը և բացահայտելու արդյունավետության բարձրացման հնարավոր ուղղությունները ՀՀ Տավուշի մարզում: Ցորենի ինքնարժեքի և հեյրաբար նաև արտադրության արդյունավետության փոփոխության դինամիկան ուսումնասիրվել է 2010-2020թթ. ժամանակահատվածի համար: Ըստ ստացված արդյունքների՝ Տավուշի մարզում ցորենի շահութաբերության աճ դիտարկվել է հատկապես 2011-2015թթ. ժամանակահատվածում, ինչը մի կողմից պայմանավորված է ցածր ինքնարժեքով, մյուս կողմից ցորենի վաճառքի բարձր գներով:**


**Ըստ այլ պայմանների կայունության և վերջին 10 տարիների միջին գնի՝ 130,4 դրամ կգ դեպքում, ցորենի բերքաբերության նվազումը 16-17 ց/հա-ից կարող է հանգեցնել ինքնարժեքի այնպիսի մակարդակի, որը հնարավորություն չի տա ապահովելու շահույթ:**

**Տավուշի մարզում ցորենի արտադրության արդյունավետության բարձրացման և առավել կայուն դարձնելու համար մեր կողմից ներդրումային ուղղություն է դիտարկվում արհշտայի արտադրությունը: Մասնավորապես արհշտայի արտադրությունը առաջարկում ենք հիմնել արտադրական կոոպերատիվի հիմքի վրա, որի դրական կողմերը և առավելությունները բերվում են հոդվածում:**

**Բանալի բառեր՝** *հացահատիկ, արտադրություն, արդյունավետություն, բերքաբերություն, ինքնարժեք, շահութաբերություն, հեռանկար, զարգացում:*


ՀՀ Տավուշի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 110751.5 հա կամ մարզի ընդհանուր տարածքի շուրջ 40.9%-ը: Գյուղատնտեսական նշանակության հողերն ունեն հետևյալ կառուցվածքը. վարելահողեր՝ 25 588.4 հա, արոտավայրեր՝ 63 065.6 հա ու խոտհարքեր՝ 9 401.3 հա:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում Տավուշի մարզի տեսակարար կշիռը 2019թ. կազմել է շուրջ 4.4 %: Նույն ժամանակահատվածի տվյալներով՝ Տավուշի մարզի գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսությունների կողմից ապահովվել է ՀՀ-ում արտադրված հացահատիկի և հատիկաընդեղենի 3.4 %-ը, կարտոֆիլի 1.2 %-ը, բանջարեղենի 1.1 %-ը, բոստանային կուլտուրաների 0.3 %-ը, պտղի ու հատապտղի 3.3. %-ը և խաղողի 5.5 տոկոսը [4, 5]:



**Գծապատկեր 1. ՀՀ Տավուշի աշնանացան ցորենի ցանքատարածությունների և համախառն բերքի դինամիկան:**

Նշված ժամանակահատվածում աշնանացան ցորենի համախառն բերքի բավական մեծ աճ գրանցվել է 2013-2016թթ. ժամանակահատվածում՝ պայմանավորված թե՛ ցանքատարածությունների, թե՛ բերքատվության բարձրացմամբ:



**Գծապատկեր 2. Զորենի բերքատվությունը Տավուշի մարզում (g/հա):**

Գծապատկեր 2-ում ներկայացված են վերջին 11 տարիների ընթացքում Տավուշի մարզում արտադրված ցորենի բերքատվության տատանումները: Նշված ժամանակահատվածի սկզբում և վերջում դիտարկվել է ցորենի բերքատվության խիստ ցածր մակարդակ, որի հիմնական պատճառը անբարենպաստ բնակլիմայական պայմաններն են [1], [2], [3]:

Աշնանացան ցորենի արտադրության արդյունավետության գնահատական տալու համար մեր կողմից հաշվարկվել է 1 հա ցորենի ցանքատարածության հաշվով կատարված ծախսերը, որի համար հիմք է հանդիսացել տեխնոլոգիական քարտը: Իրականացված հարցումների և ուսումնասիրությունների արդյունքում ամբողջացվել է այդ ցուցանիշը:

Ըստ հաշվարկների՝ 1 հեկտարի հաշվով ծախսերը կազմել են շուրջ 172.75 հազ. դրամ (2015-2019թթ. միջինով), այսինքն՝ 1 ցենտներ ցորենի ինքնարժեքը 24,24 g բերքատվության պայմաններում կազմել է 7,13 հազ. դրամ:

Հաշվարկված ծախսերը հիմք են հանդիսացել 2010-2018թթ. համար ինքնարժեքների հաշվարկման, որի հիմնական նպատակն է ցույց տալ 10 տարիների ընթացքում ցորենի ինքնարժեքի և հետևաբար արդյունավետության փոփոխության դինամիկան: Հաշվարկի հիմքում դրված է այն տրամաբանությունը, թե ցորենի ինքնարժեքը ինչ հիմնական ծախսային հոդվածներից է բաղկացած և ՀՀ ՎԿ կողմից ներկայացված տարբեր ապրանքատեսակների և ծառայությունների գնային ինդեքսների միջոցով վերահաշվարկվել է ինքնարժեք տարբեր տարիների համար:

Տավուշի մարզում ցորենի արտադրությունը կազմակերպվում է անջր-դի պայմաններում, որի դեպքում բերքատվությունը ցածր է ստացվում: Հնա-րավորության դեպքում կարելի է ոռոգելի դարձնել որոշ ցանքատարածու-թյուններ: Ըստ գնահատականի՝ այլ պայմանների կայունության և վերջին 10 տարիների միջին գնի՝ 130,4 դրամ կգ դեպքում, ցորենի բերքատվության նվազումը 16-17 ց/հա-ից կարող է հանգեցնել ինքնարժեքի այնպիսի մակար-դակի, որը հնարավորություն չի տա ապահովելու շահույթ:

Ցորենի արտադրության շահութաբերության հաշվարկման հիմքում պետք է դրվի փաստացի իրացման ծավալները, որն էլ հաշվի առնելով՝ ա-ռանձին ուսումնասիրվել է արտադրված ցորենի վաճառքի տեսակարար կշիռը: Եզրակացնում ենք, որ ապրանքային ցորենի փոքր մասն է տրվել փոխանակության և բնամթերային վարձատրության, մեծ մասը վաճառվել է [1]:

**Աղյուսակ 1. Աշնանացան ցորենի արտադրության հաշվարկային արդյունավետությունը Տավուշի մարզում:**

|        | Ցորենի<br>1 կգ-ի ի-<br>նքնարժե-<br>քը (դրամ) | Ցորենի<br>1 կգ-ի վա-<br>ճառքի գի-<br>նը (դրամ) | Ցորենի 1 կգ<br>ապահովված<br>շահույթը<br>կամ վնասը<br>(դրամ) | Մարզում<br>ցորենի<br>վաճառքի<br>ծավալը<br>(տոննա) | Ընդամենը<br>շահույթ<br>կամ վնաս<br>վաճառված<br>ցորենից<br>(մլն դրամ) | Շահութա-<br>բերության<br>մակար-<br>դակ<br>(%) |
|--------|----------------------------------------------|------------------------------------------------|-------------------------------------------------------------|---------------------------------------------------|----------------------------------------------------------------------|-----------------------------------------------|
| 2010թ. | 122.7                                        | 120.9                                          | -1.8                                                        | 228.2                                             | -0.3                                                                 | -1.4                                          |
| 2011թ. | 64.1                                         | 139                                            | 74.9                                                        | 809.9                                             | 94.7                                                                 | 116.9                                         |
| 2012թ. | 67.8                                         | 158                                            | 90.2                                                        | 960                                               | 127.6                                                                | 132.9                                         |
| 2013թ. | 51.0                                         | 162                                            | 111                                                         | 1068.1                                            | 232.3                                                                | 217.4                                         |
| 2014թ. | 54.8                                         | 142                                            | 87.2                                                        | 1467.8                                            | 233.3                                                                | 158.9                                         |
| 2015թ. | 54.6                                         | 118                                            | 63.4                                                        | 1687.2                                            | 196.1                                                                | 116.1                                         |
| 2016թ. | 63.5                                         | 111                                            | 47.5                                                        | 1260.2                                            | 94.3                                                                 | 74.8                                          |
| 2017թ. | 71.3                                         | 114                                            | 42.7                                                        | 663.2                                             | 39.7                                                                 | 59.9                                          |
| 2018թ. | 79.2                                         | 113                                            | 33.8                                                        | 524.9                                             | 22.4                                                                 | 42.6                                          |
| 2019թ. | 137.2                                        | 126                                            | -11.2                                                       | 569.2                                             | -4.6                                                                 | -8.1                                          |
| 2020թ. | 145.2                                        | 130                                            | -15.2                                                       | 298.2                                             | -29.2                                                                | -10.2                                         |

Հնարավոր շահույթի հաշվարկը մեր կողմից կատարվել է հիմք ընդու-նելով ըստ ուսումնասիրվող տարիների փաստացի վաճառված արտադրաքի ծավալները ու իրացման միջին գները և միավորի ապահովող շահույթը [1], [2], [3]:



Տավուշի մարզում ցորենի շահութաբերության աճ դիտարկվել է հատկապես 2011-2015թթ. ժամանակահատվածում, որը մի կողմից պայմանավորված է բարձր բերքատվության պայմաններում ցածր ինքնարժեքով, մյուս կողմից՝ ցորենի ձևավորված բարձր գներով: Ցորենի միջին գինը 10 տարվա կտրվածքով կազմել է 130,39 դրամ:

Տավուշի մարզում ցորենի արտադրության արդյունավետության բարձրացման համար ներդրումային ուղղություն է դիտարկվում արհիշտայի արտադրությունը և որպես իրավական կազմակերպման ձև՝ առաջարկում ենք ստեղծել արտադրական կոոպերատիվ, որի դրական կողմերը կներկայացնենք ստորև:

Առաջարկվող բիզնես մոդելի հիմքում ընկած է արտադրական կոոպերացիայի հիման վրա մարդկային եվ նյութական կապիտալի համատեղման գաղափարախոսությունը: Գյուղատնտեսական հումքի արտադրությունը և իրացումը ինքնին կարող է ապահովել ոչ բավարար շահութաբերություն, իսկ եթե այն անցնում է լրացուցիչ վերամշակման փուլով, ավելացնելով իր արժեքը, հնարավորություն է ստեղծվում ավելացնելու շահույթը:

Բիզնեսի այս տեսակի հաջողության գրավականներից մեկը կարող է լինել այն, որ գյուղացիական տնտեսությունները, որոնք կհանդիսանան կոոպերատիվի անդամներ, հնարավորություն կունենան իրենց արտադրած ցորենը վերամշակելու և արտադրելու արհիշտա, որի արժեքն ավելի բարձր է և լրացուցիչ շահույթի ստացման հնարավորություն կտա: Այս տեսանկյունից հումքը՝ ալյուրը, արտադրության համար կլինի ավելի էժան (ինքնարժեքով) և հետևաբար մրցակցային առավելությունով: Կոոպերատիվի անդամները կհանդիսանան նաև կոոպերատիվի աշխատողներ, որը արտադրությանը կազատի լրացուցիչ ծախսերից: Այս դեպքում կոոպերատիվի անդամների մոտիվացիան կլինի վերջնական շահույթի բաշխումից իրենց մասնաբաժնի ստացումը: Հետևաբար ինչքան ցածր ծախսեր, այնքան բարձր շահույթ, հետևաբար մեծ շահաբաժին:

Համատեղ ձևավորվելիք արտադրական կարողությունների հիման վրա արհիշտայի արտադրության կազմակերպումը հնարավորություն կտա Տավուշի մարզի գյուղական համայնքներում լուծելու զբաղվածության խնդիրը և բարեկացության բաժրացման երաշխիք կդառնա:

Նախնական բիզնես մոդելը ենթադրում է 20 գյուղացիական տնտեսությունների հենքի վրա արտադրական կոոպերատիվի ձևավորում: Սեփական ցորենի վերամշակումից բացի՝ կոոպերատիվը կարող է օգտագործել



տվյալ համայնքում կամ հարևան համայնքներում արտադրված և վերամշակված ցորենի բերքի որոշ մասը:

Որպես որակյալ և դիետիկ սնունդ՝ արտադրված արիշտան կարող է մատակարարվել նաև մարզի դպրոցներին և նախադպրոցական հաստատություններին:

Առաջարկվում է կազմակերպել արիշտայի երկու տեսակի արտադրություն՝ «Արիշտա՝ բարձր տեսակի և ամբողջահատիկ ցորենի ալյուրների խառնուրդից» և «Արիշտա՝ ամբողջահատիկ ցորենի ալյուրի պարունակությամբ»: Երկու տեսակի արիշտայի արտադրության կազմակերպումը հնարավորություն կտա օգտագործելու համայնքներում արտադրվող և՛ բարձր տեսակի, և՛ ամբողջահատիկ ցորենի ալյուրը, որը հնարավորություն կտա նաև աստիճանաբար հարմարվելու ամողջահատիկ ցորենի ալյուրից պատրաստված արտադրանքին և ունենալու ընտրության հնարավորություն: Գյուղացիները մարզում գործող ալյուրագներում կարող են իրենց արտադրած ցորենը վերամշակել ալյուրի և հանձնել կոոպերատիվին: Այս դեպքում ցորենի ինքնարժեքին կավելանա աղալու հետ կապված ծախսերը և տրանսպորտային որոշ ծախսեր: Հետագայում ակնկալվում է, որ կոոպերատիվը կներդնի ալյուրացային կարողություններ, և հումքը ավելի էժան կստացվի:

Աղյուսակ 2-ում կներկայացնենք երկու տեսակի արիշտաների արտադրության հետ կապված ծախսերը: Հայկական ավանդական արիշտայի արտադրության համար անհրաժեշտ հումքը բաղկացած է ընդամենը 2 բաղադրիչներից՝ ալյուր և կերակրի աղ: Նախատեսվում է տարեկան արտադրել 50 տոննա արիշտա, հավասար հարաբերակցությամբ՝ 25 տոննա արիշտա՝ բարձր տեսակի և ամբողջահատիկ ցորենի ալյուրի խառնուրդից (50/50 հարաբերակցությամբ), և 25 տոննա արիշտա՝ ամբողջահատիկ ցորենի ալյուրից:

## Աղյուսակ 2.

### Արիշտայի արտադրության ընդհանուր ծախսերի հաշվարկ:

| N        | Ծախսումների հոդվածները             | Գումարը, (հազ.դրամ)                                                               |                                                             |
|----------|------------------------------------|-----------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------|
|          |                                    | Արիշտա՝ բարձր տեսակի<br>և ամբողջահատիկ ցորե-<br>նի ալյուրի խառնուրդից<br>25 տոննա | Արիշտա՝<br>ամբողջահա-<br>տիկ ցորենի<br>ալյուրից<br>25 տոննա |
| 1.       | Հումք և հիմնական նյութեր           | 7244                                                                              | 10100                                                       |
| 2.       | Օժանդակ նյութեր                    | 305                                                                               | 305                                                         |
| 3.       | Աշխատավարձ                         | 2251                                                                              | 2251                                                        |
| 4.       | Վառելիք, Ջուր, էլեկտրա-<br>էներգիա | 1211                                                                              | 1211                                                        |
| 5.       | Արտադրամասային ծախսեր              | 3138                                                                              | 3138                                                        |
| 6.       | Ընդամենը արտադրական<br>ինքնարժեք   | 3138                                                                              | 3138                                                        |
| 7.       | Տրանսպորտային ծախսեր               | 954                                                                               | 928                                                         |
| Ընդամենը |                                    | 18241                                                                             | 21071                                                       |

Առաջարկվող երկու արտադրատեսակների միջև հիմնական տարբերությունը պայմանավորված է հումքի արժեքով, այն տրամաբանությամբ, որ ամբողջահատիկ ցորենի ալյուրն ունի ավելի բարձր գին, և հետևաբար միայն դրանից պատրաստված արիշտան կունենա բարձր ինքնարժեք՝ համեմատած բարձր տեսակի հետ խառնուրդով արտադրելու դեպքում: Արդյունքում դուրս է բերվել 50 տոննա արիշտայի արտադրության ծախսերը ըստ առանձին տեսակների:

Ֆինանսական արդյունքների կանխատեսումը արվել է՝ հիմք ընդունելով ընդհանուր ծախսերի միջոցով հաշվարկված 1կգ արիշտայի ինքնարժեքը և ձևավորված գները: Հաշվարկում բերված գները վերցված են մի փոքր ավելի ցածր՝ հիմք ընդունելով նոր շուկա մուտք գործելու և արդյունավետորեն մրցակցելու հնարավորությունը:

### Աղյուսակ 3.

#### Արտադրության արդյունավետության հաշվարկ

| Արտադրատեսակը                                                        | 1 կգ ինք-<br>նաթեքը,<br>դրամ | 1 կգ իրաց-<br>ման գինը,<br>դրամ | Շահույթը 1կգ<br>հաշվով,<br>դրամ | Շահութաբե-<br>րության մա-<br>կարդակը, % |
|----------------------------------------------------------------------|------------------------------|---------------------------------|---------------------------------|-----------------------------------------|
| Արիշտա բարձր տեսակի<br>և ամբողջահատիկ ցորե-<br>նի ալյուրի խառնուրդից | 730                          | 1000                            | 270                             | 36,9                                    |
| Արիշտա ամբողջահա-<br>տիկ ցորենի ալյուրից                             | 840                          | 1200                            | 360                             | 42,8                                    |

Ըստ պլանավորվող արտադրության ծավալների և ակնկալվող շահութաբերության՝ տարեկան հնարավոր կլինի ապահովել 15750 հազար դրամ շահույթ:

Արտադրամասի տարածքի ձեռք բերման (բարեկարգման) և սարքավորումների ձեռքբերման ու տեղակայման համար, ըստ մեր հաշվարկների, անհրաժեշտ կլինի 54800 հազար դրամ:

Տարեկան 15750 հազար դրամ շահույթի դեպքում կապիտալ ներդրումների ետգնման ժամկետը կկազմի 3,4 տարի:

Ըստ մեզ՝ բիզնես մոդելը կիրառելի կլինի չորս տարբերակներով, և դրանք ներկայացվում են որպես առաջարկություններ:

ՄՈՂԵԼ 1: Կիրառելի կլինի Տավուշի մարզի այն համայնքներում, որտեղ հողաբաժինները համեմատաբար խոշոր են, և արտադրվող ցորենի ծավալները՝ մեծ: Արդյունաբերական հենքի վրա ձևավորված արիշտայի արտադրամասը հնարավորություն կտա կոոպերատիվի շրջանակներում կազմակերպելու արիշտայի խոշոր արտադրություն: Նախատեսվում է ստեղծել լիարժեքորեն գործող արտադրամաս՝ իր շենքային պայմաններով և սարքավորումներով: Այս դեպքում ներդրումների ետգնման ժամկետը կկազմի շուրջ 3.4 տարի:

ՄՈՂԵԼ 2: Ցորենի արտադրության համեմատաբար փոքր ծավալներ ունեցող համայնքներում, կոոպերատիվի անդամների շենքային պայմանների հիման վրա կարելի է ձևավորել կիսաավտոմատացված արտադրություն: Այս դեպքում շենքային պայմաններ ձևավորելու համար համեմատաբար խոշոր լրացուցիչ կապիտալ միջոցներ ներգրավելու անհրաժեշտություն չի կլինի, հետևաբար ռիսկայնությունը կլինի ցածր:

ՄՈՂԵԼ 3: Գործող հացաթխման արտադրամասերին կից արիշտայի արտադրության կազմակերպում: Այս դեպքում հացաթխման համար անհրաժեշտ սարքավորումներից զատ անհրաժեշտ կլինի ձեռք բերել գրտնակող և արիշտան կտրող մեքենա:

ՄՈՂԵԼ 4: Տնայնագործական պայմաններում արիշտայի արտադրություն, որի դեպքում ֆերմերային տնտեսությունն արիշտայի արտադրության համար կօգտագործի ընտանեկան գույքն ու աշխատանքային ռեսուրսները: Այս դեպքում անհրաժեշտ կլինի ձեռք բերել միայն արիշտայի դանակ (գրտնակ), որի գինը կազմում է 20-25 հազար դրամ: Այս մոդելը մասնակցություն կարող է ունենալ զբոսաշրջային գործունեության մեջ՝ որպես ավանդական արիշտայի արտադրության և հյուրասիրության օղակ:

### **Օգտագործված գրականության ցանկ**

1. Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2019 թվականին, Տեղեկագիր, ՀՀ ՎԿ, Երևան, 2020 ([https://armstat.am/file/article/iracum\\_-2019.pdf](https://armstat.am/file/article/iracum_-2019.pdf) մուտք 04.07.2020):
2. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2019 թվականին, Տեղեկագիր, ՀՀ ՎԿ, Երևան, 2020 ([https://armstat.am/file/article/29\\_gt\\_2019.pdf](https://armstat.am/file/article/29_gt_2019.pdf) մուտք 04.07.2020):
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010-2020թթ., Տեղեկատվական ամսական զեկույց, ՀՀ ՎԿ, Երևան, 2011-2021 (<https://armstat.am/am/?nid=81&id=1210> մուտք 04.07.2020):
4. ՀՀ Տավուշի մարզի 2017-2025 թվականների զարգացման ռազմավարություն, հավելված N 10 ՀՀ կառավարության 2017 թ. հուլիսի 6-ի նիստի N 29 արձանագրային որոշման, (<http://www.mtad.am/files/docs/1780.pdf> մուտք 04.07.2020):
5. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզը թվերով, 2019, Վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Երևան, 2019 ([https://armstat.am/file/article/29\\_gt\\_2019.pdf](https://armstat.am/file/article/29_gt_2019.pdf) մուտք 04.07.2020):



## ORGANIZING ARISHTA PRODUCTION IN RA TAVUSH REGION AS MEANS TO PROMOTE WHEAT CULTIVATION

**VOSKANYAN ASHOT**

*PhD, Associated Professor,  
Head of the Chair of Armenian National Agrarian University*

e-mail: ashot.voskan@gmail.com

**HARUTYUNYAN ARMAN**

*PhD, Associated Professor,  
Lecturer of Armenian National Agrarian University*

e-mail: armanhar@list.ru

The article aims to assess the actual state of wheat production efficiency, to identify possible directions for increasing the efficiency in the Tavush region of the Republic of Armenia. The dynamics of the change of the cost of wheat and therefore efficiency of production was studied for the period 2010-2020. According to the obtained results, the increase of wheat profitability in Tavush region was observed especially in 2011-2015. This is due, on the one hand, to the low cost, on another hand, to the high prices for wheat.

According to the stability of other conditions, at the average price of 130.4 drams per kg for the last 10 years, the decrease in wheat yield from 16-17 c / ha may lead to a level of cost that will not provide a profit.

In order to increase the efficiency of wheat production in Tavush region and to make it more stable, we consider noodle production as an investment direction. In particular, we propose to establish noodle production on the basis of a production cooperative, the advantages of which are mentioned in the article.

**Key words:** grain, production, efficiency, yield, cost, profitability, perspective, development.

## ОРГАНИЗАЦИЯ ПРОИЗВОДСТВА АРИШТЫ В ТАВУШСКОЙ ОБЛАСТИ РА КАК СРЕДСТВО СОДЕЙСТВИЯ ВЫРАЩИВАНИЮ ПШЕНИЦЫ

**ВОСКАНЯН АШОТ**

*Кандидат экономических наук, доцент,  
Заведующий кафедрой управления и политики агробизнеса Армянского  
Национального Аграрного Университета  
электронная почта: ashot.voskan@gmail.com*

**АРУТЮНЯН АРМАН**

*Кандидат экономических наук, доцент,  
Преподаватель Армянского Национального Аграрного Университета  
электронная почта: armanhar@list.ru*

Статья направлена на оценку фактического состояния эффективности производства пшеницы, определение возможных направлений повышения эффективности в Тавушской области Республики Армения. Изучена динамика изменения себестоимости пшеницы и следовательно эффективности производства на период 2010-2020 гг.. Согласно полученным результатам, рост рентабельности пшеницы в Тавушской области наблюдался особенно в 2011-2015 годах. Это связано, с одной стороны с низкой себестоимостью пшеницы, а с другой стороны высокими ценами на пшеницу.

По стабильности других условий, при средней цене 130,4 драма за кг за последние 10 лет снижение урожайности пшеницы с 16-17 ц / га может привести к уровню затрат, не обеспечивающих прибыль.

Чтобы повысить эффективность производства пшеницы в Тавушской области, сделать его более стабильным, мы рассматриваем производство лапши как инвестиционное направление. В частности, мы предлагаем наладить производство лапши на базе производственного кооператива, о преимуществах которого рассказано в статье.

**Ключевые слова.** зерно, производство, эффективность, урожайность, стоимость, рентабельность, перспективы, развитие.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 20.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 18.09.2021թ.: